

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ԿՈՐՍՈՒԱԾ ՀԱՐԱՋԱՏՆԵՐՈՒ ՓՆՏՈՏՈՒՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍՈՒՐԻՈՅ ՏԱՐԱԾՔԻՆ

Միհրան Մինասեան
mihran.min@gmail.com

ՄՈՒՏՔ



Հայոց Ցեղասպանութեան եւ Համաշխարհային Ա. Պատերազմի թոհուրոհին ընթացքին ցիրուցան եղաւ ամբողջ արեւմտահայութիւնը. շատերը սպանուեցան, իսկ ողջ մնացողներ՝ ապաստանեցան հեռաւոր ու մօտաւոր երկիրներ ու երկրամասեր: Հազիւ հասած իրենց նոր բնակավայրերը, Ցեղասպանութեան մնացորդացը սկսան փնտռել իրենց ընտանիքի կորսուած անդամները, հարազատներն ու ծանօթները, բարեկամներն ու համագիւղացիները, եւ առ այդ՝ դիմեցին բազմազան միջոցներու: Անոնք եկեղեցիներու, հաւաքավայրերու եւ ակումբներու պատերուն փակցուցին ազդեր, թերթերու մէջ տպեցին յայտարարութիւններ, տարբեր հասցէներով գրեցին նամակներ, հարցուփորձի ենթարկեցին վերապրողներ, իսկ անլի ետք՝ անոնցմէ շատեր նոյնիսկ վերադարձան արեւելք՝ Հալէպ կամ սուրիական անապատ եւ տեղւոյն վրայ կատարեցին անհրաժեշտ հետախուզական աշխատանքներն ու փնտռուքները:

ՓՆՏՈՏՈՒՔՆԵՐ ՄԱՄՈՒԼԻ ՄԻՋՈՅՈՎ

Կորսուած հարազատները գտնելու ուղղութեամբ առաւել ընդհանրացած ձեւը թերթերու մէջ տպուած յայտարարութիւններն էին, որոնք Պոլսոյ եւ արտասահմանի հայաթերթերուն մէջ ունէին տարբեր վերնագրեր՝ «Հայերը Զիրար Կը Փնտռեն», «Տարագրուածներու Ժամադրավայրը», «Տեղեկութիւն Կ'ուզուի» են.: Անլի ետք ընդհանրացաւ «Կը Փնտռուին» կամ սոսկ «Փնտռուածներ» խորագիրը, որ Հայաստանի մէջ ստացաւ «Փնտռում են Հարազատներին» ձեւը:

Թերթերու այս սիւնակները, 1915էն ընդհուպ՝ մինչեւ 1980ականները, մնացին հայ մամուլի ամէնէն կարդացուած ու փնտռուած անկիւններէն մէկը. երեւոյթ մը, որ բնաւ զարմանալի չէ, որովհետեւ այդ օրերուն չկար մէկը որ կորսուած հարազատ մը կամ ծանօթ մը չունենար: Նոյն այդ թերթերուն մէջ տպուեցան նաեւ փնտռուքներուն արդիւնքները: Նաեւ՝ անոնց միջոցով է որ կատարուեցան զիրար գտած հարազատներու հասցէներու եւ այլ մանրամասնութիւններու փոխանակումները:

Թերթերու մէջ տպուած յայտարարութիւններուն զուգահեռ, յաճախ կը տրուէին նաեւ խրախուսիչ խոստումներ. փնտռուողին մասին առաջին ստոյգ տեղեկութիւն փոխանցողին կը խոստացուէր նիւթական պարգէւ:



Ընդհանուր Յուրացակ Ազգայնական Հայերու, Աղեքսանդրիա, 1916.

Փնտոտուքի համար տպագրուած թերթիկ (Հայաստանի Ազգային Արխիւ, ֆոնտ 420 (Ռուբէն Հերեանի ֆոնտ), ցուցակ 65, գործ 25, թերթ 15)



ՓՆՏՈՒՆՈՒԲՆԵՐ ՆԱՄԱԿՆԵՐՈՒ ՄԻՋՈՑՈՎ

Թերթերու միջոցաւ եղած յայտարարութիւններէն ետք, փնտոտուքի ընդհանրացած երկրորդ ձեւը նամակագրութիւնն էր:

Հալէպը, որպէս աքսորական հայերու տեղաւորման գլխաւոր կեդրոն եւ սուրիական անապատին բացուող առաջին կայան, իր վրայ սեւեռած էր բոլոր փնտոտողներուն ուշադրութիւնը, եւ պատահական չէ որ աշխարհի տարբեր անկիւններէն՝ Չինաստանէն մինչեւ Սիպերիոյ խորերը, Ափրիկէէն եւ Եւրոպայի, Ամերիկայի ու Միջին Արեւելքի երկիրներէն՝ տեղւոյն Ազգային Առաջնորդարանին եւ հայրենակցական մարմիններուն ու տարբեր անհատներու յղուած են հազարաւոր նամակ-խնդրագրեր՝ անոնցմէ «բարի լուր» մը կամ լուսաբանութիւն մը ստանալու արդար ակնկալութեամբ:

Այդ օրերու նամակագրական «եռուզեռ»ին մասին ընդհանուր գաղափար մը կարելի է կազմել Կարապետ Գաբրիէանի (1861-1925) յուշերու մեծարժէք հատորի այն հատուածէն, ուր ան նկարագրած է՝ թէ ինչպէս Չինադադարին Հալէպ հասնելէն ետք, արտասահմանի հայ թերթերը աւետած են իր վերապրիլը, որմէ ետք, իր իսկ հաւաստումով, «Ամէն կողմէ ծանօթներէս նամակներ տրեղալ կ'սկսին, խնդակցութիւններու, աչքի լուսերու հետ, իրենց ընտանիքի

պարագաներու մասին տեղեկութիւններ կ'ուզեն. կը հարկադրուիմ ամէն-քին ալ պատասխանել. մէկ նամակը 3-4 դրշ.ի կը նստի վրաս, տարագրութենէ վերադարձող ընծի պէս մէկու մը համար քիչ մը նեղիչ զոհողութիւն մըն էր. բայց թէ խղճի պարտականութիւն է կ'ըսեմ. 7-800ի չափ նամակներու պատասխան տրուի»³:



Փնտտուքի համար որբհաւաք Ռուբէն Հերեանի թերթիկներէն՝ փնտռողներու եւ փնտռուողներու անուններով ու հասցէներով (ՀԱԱ, ֆոնտ 420, ցուցակ 65, գործ 27, թերթ 3, 4, 5)

Փակագիծի մէջ նշենք, թէ տարիներ առաջ, մենք առիթ ունեցանք ծանօթանալու եւ մուտքագրելու Բերիոյ (Հալէպի) Թեմի Ազգային Առաջնորդարանի դիւանատան մէջ պահուող եւ մեր նիւթին հայող բազմահարիր նամակներ ու անոնց պատասխանները, ապա արխիւային այդ մեծ հաւաքածոյին կցեցինք քանի մը փոքր այլ հաւաքածոներ եւս, ինչպէս՝ Հալէպի Միջ-Գաւառային Հայրենակցական Միութեան ատենապետ, Հայ Ազգային Միութեան ատենադպիր եւ Պուրսայի ու Նիկոմիդիոյ Հայրենակցական Միութեան երկարամեայ ատենապետ՝ Սարգիս Սէլեանի (1879-1970) արխիւին մաս կազմող ու մեր մօտ գտնուող նամակները, Տիգրանակերտի Հայրենակցական Միութեան Հալէպի մասնաճիւղի արխիւէն նիւթեր, հալէպահայ ծանօթ ակնաբուժ Ռուպէր Ճեպէճեանի (1909-2001) անձնական դիւանի նիւթերը (որոնք 1960-70ականներուն Հայաստանէն իրեն յղուած նամակներ էին) եւ վերջապէս, Հայաստանի Ազգային Արխիւին մէջ պահուող ծանօթ որբհաւաք Հերեանի (1868-1921) փնտտուքներու թեմայով ստացած տասնեակ խնդրագրերու հաւաքածոն⁴: Այս բոլորով յաջողած ենք համախմբել հարազատներու փնտտուքի թեմայով գրուած մօտ հազար դիմում-խնդրագիր եւ փնտռուողներու ցուցակ, առանց հաշուելու նոյն փնտտուքի

հարցով փոխանակուած բազմաթիւ նամակներն ու Հալէպէն անոնց տրուած պատասխանները⁵:

Իրեն ուղուած հարցումներու տարափին տակ, Հալէպի Ազգային Առաջնորդարանը ստեղծած էր փնտռոտութի յատուկ համակարգ մը. երբ դիմում մը հասնէր Առաջնորդարան, առաջնորդ հայրը կամ դիւանապետը նամակին ամփոփումը առանձին գիրով անյապաղ կը փոխանցէր այն որբանոցներուն, անհատներուն, քահանայ հայրերուն, հայրենակցական խմբաւորումներուն, թաղական խորհուրդներուն, հայրենակիցներուն, Քարէն Եփփէին (1876-1935) եւ կամ բոլոր անոնց որոնք կրնային լոյսի նշոյլ մը սփռել հարցին վրայ եւ որեւէ ձեւով օգտակար դառնալ որոնման աշխատանքներուն:

Առաջնորդարանին կողմէ յղուած նամակներու կողքին, ըստ անհրաժեշտութեան, յաճախ եկեղեցիներու խորաններէն յայտարարութիւններ կը կատարուէին կամ տեղական մամուլին մէջ ծանուցումներ կը տպուէին, երբեմն ալ եկեղեցոյ բակին կամ հանրային այլ վայրերու մէջ ազդեր կը փակցուէին, ու այս բոլորին պատասխանները համադրուելով՝ արդիւնքները կը փոխանցուէին փնտռող ազգայիններուն:

Փնտռուած անհատները ընդհանրապէս անյայտացած էին պատմական հետեւեալ դէպքերու ընթացքին.-

1- 1915ին ու անոր յաջորդող տարիներու կոտորածներուն կամ բռնագաղթի ժամանակ: Փնտռուածներու այս խումբը բնականաբար իր թիւով մեծագոյնն է: Մեծ եղած է մանաւանդ սուրիական անապատ մնացած կամ այնտեղ անհետացածներու համեմատութիւնը:

2- Օսմանեան բանակ զինուորագրուած եւ տուն չվերադարձած հայ զինուորներ:

3- Զինադադարէն ետք Կիլիկիա վերադարձած եւ 1920-21ի Կիլիկիոյ կոտորածներուն զոհուած կամ անոր հայաթափումին հետեւանքով անյայտացածներ:

4- Քեմալականներու կողմէ 1920-21ին Էսկիշեհիրէն, Կուտինայէն, Պուրսայէն ու շրջակայքէն Խարբերդ ու աւելի հեռունները արքայութեան:

5- 1922ի Զմիռնիոյ աղէտին հետեւանքով կորսուածներ:

6- Ներքին գաւառներէն 1926-28ի վերջին բռնագաղթին հետեւանքով անյայտացածներ:

Հալէպ եւ Սուրիա ուղղուած փնտռութիւններու կողքին, պէտք է նշել նաեւ Սուրիայէն՝ արտասահման կատարուած փնտռութիւններու պարագան, երբ Սուրիա ապաստանած հայեր, իրենց հերթին, փնտռած են ենթադրաբար արտասահման ապաստանած իրենց հարազատները: Այդ փնտռութիւնները շատ անգամ եղած են Հալէպի Ազգային Առաջնորդարանի կամ տեղւոյն հայրենակցական միութիւններու միջոցով՝ թերեւս անոր համար, որ փնտռողները ընդհանրապէս եղած են անգրագէտ մարդիկ, կամ Հալէպի

մէջ չեն ունեցած յստակ ու մնայուն հասցէներ եւ կամ իրենց տրամադրութեան տակ չեն գտնուած արտասահմանեան այն ազգային հաստատութիւններուն հասցէները, որոնց պէտք է յղուէին նման նամակները:

Հալէպէն՝ արտասահման կատարուած փնտռութիւններուն մէջ, կան նաեւ հարցումներ՝ Ա. Աշխարհամարտէն առաջ Միացեալ Նահանգներ ու այլ երկիրներ գաղթած հայերու մասին, որոնց Հալէպի հարազատները, քսորի ճանապարհին, կորսնցուցած էին անոնց հասցէները:

Հակառակ Հալէպի ու շրջակայքի մէջ կատարուած մանրագնին փնտռութիւններուն, սակաւաթիւ բախտաւորներ միայն գտած են իրենց հարազատները ու միացած անոնց: Փնտռուողներէն շատեր հարցապնդուողներուն համար եղած են բոլորովին անծանօթներ, շատերու համար ըսուած է՝ թէ անոնք զոհուած են քսորի ճանապարհին կամ սուրիական անապատին մէջ, ուրիշներու համար պատասխանուած է՝ թէ չեն քսորուած ու մնացած են Երկիր, այլոց համար՝ թէ առեւանգուած են քսորի ճանապարհին կամ սուրիական անապատին մէջ: Այլ խումբի մը համար տրուած են անոնց գտնուելու վայրին մասին ենթադրական տեղեկութիւններ, մինչ փոքր բնակավայրերու բնակիչներուն համար յաճախ յիշուած է՝ թէ այդ բնակավայրէն Հալէպի մէջ վերապրողներ չկան, որ կարենան պատասխանել ուղղուած հարցումներուն... Ու եթէ յանկարծ պատահէր հրաշքը ու գտնուէր կորսուած հարազատը, Առաջնորդարան հասած շնորհակալական նամակներուն վրայ առաջնորդ Արտաւազդ Արք. Սիրմէեան (1889-1951) կը սիրէր ձգել հետեւեալ մակագրութիւնը. «*Առաջնորդարանը իր պարտքը կը կատարէ միայն*»: Պատահած է որ Ֆրանսա ապրող հայ մը, որուն «*15 տարիներէ ի վեր կորուսեալ*» զաւակը գտնուած է Հալէպի Ազգային Առաջնորդարանին միջոցով ու ղրկուած՝ հօրը, խնդրած է առաջնորդ Սիրմէեան սրբազանէն, որ իր լուսանկարը ղրկէ իրեն, որպէսզի «*միշտ աղօթք ընեմ Ձեզի*»⁶:

Պէտք է հաստատել որ, Հալէպի Ազգային Առաջնորդարանը ոչինչ խնայած է դիմողներու խնդրանքին գոհացում տալու համար եւ ըրած է կարելին՝ գտնելու փնտռուողներուն հետքը. փաստ՝ նամակ մը ստանալու օրն իսկ, տարբեր հասցէներով յղուած բազմաթիւ հարցումներն ու անոնց պատասխաններու ուշացումի պարագային եղած յիշեցումներն ու յանդիմանական տողերը:

Ազգային Առաջնորդարանը իր ծառայութիւնները չէ սահմանափակած միայն նամակագրական կապերով, այլ անհրաժեշտութեան պարագային, հետախոյզներ ղրկած է Հալէպի տարբեր թաղամասեր կամ սուրիական անապատ, կատարած է դրամական փոխանցումներ, օժանդակած է գտնուած հայրենակիցները արտասահման՝ իրենց հարազատներուն մօտ տեղափոխելու աշխատանքներուն, ինչպէս նաեւ այլ ծառայութիւններ:

Փնտռուողները ընդհանրապես եղած են մօտիկ ազգականներ, հարազատներ՝ հայր, մայր, զաւակ, քոյր, եղբայր, կին, ամուսին եւն.: Ուրիշներ փնտռած են ատելի հեռաւոր ազգականներ, բարեկամներ, ընկերներ, ծանօթներ, դրացիներ...: Գտնուած են նաեւ մարդիկ, որ փնտռեն ուել համագիւղացի, համաթաղեցի, համաքաղաքացի կամ նոյնիսկ համազաւառացի, ինչպէս օրինակ՝ Խարբերդի Քէարիկ գիւղէն Ռուսաստանի Մայկոբ քաղաքը ապաստանած Յովհաննէս Նաճարեան Ասատուրովիչը, որ 1927ին պիտի գրէր. «*Խնդրեմ Ս. հայր, Խարբերդ նահանգի շրջանից քէարիկցի, մալաթիացի, մազկերպրցի, խօզաթցի, բերդակցի, չիմիշկազակցի, ուլքեր որ կը գտնուին այդպէս, մեծ եւ փոքր արու եւ էգ կարելի է մեզ գրեք*»⁷, իսկ Համբարձում Միհրանեան, տարի մը ետք Լենինականէն կը գրէր. «*Խնդրում եմ ձեզանից որ այդպէս (Հալէպում) գտնուող բոլոր պայպուրօցիների անուանացուցակը ուղարկէք ինձ: Ես ձեզանից շատ եմ խնդրում որ այս խնդրանքս անպայման կատարէք: Մենք հոս բաւական մեծ թուով պայպուրօցիներ կանք, որով մեզանից իւրաքանչիւրը ունի իր ընտանիքի անդամների եւ կամ ազգականների կորուստը, եւ բոլորս ալ որոնում ենք այդ կորուստներին: Վերջերս ստացած ստորագրութեանց համաձայն հոս բաւականի մեծ թուով պայպուրօցիներ պէտք է լինեն: Մեծ յոյսով ենք որ դուք ուղարկելով այդ անուանացանկը մեզանից շատ շարտերուն մեծ ուրախութիւն կը պատճառէք*»⁸: Ծանօթ է, որ Հալէպի մէջ պայպուրօցիներ-բարբերօցիներ ընդհանրապէս չեն գտնուած, եւ Սիւմէեան սրբազան նամակին վրայ ատելի ետք ձգած է հետեւեալ մակագրութիւնը. «*Չեմ կարծեր որ բարբերօցիք ըլլան, դա՛րձեալ պրպպել, եւ արդիւնքը գրեք*»: Բազմաթիւ են օրինակները, երբ մարդիկ չստուգուած լուրի մը կամ նոյնիսկ ենթադրութեան մը վրայ հիմնուելով՝ գրած են նամակներ, ակամայ յիշեցնելով ժողովրդային առածը, թէ «Ծովը ինկողը օձին կը փաթթուի»:

ՓՆՏՈՏՈՒՔՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Հարազատներու փնտռտուքի շարժումը սկսած է Զինադադրի յայտարարութեան հետ եւ առաջին նամակները Հալէպ հասած են 1918ի վերջ-1919ի սկզբնաւորութեան ու անոնց հոսքը շարունակուած է մինչեւ 1970ականները: Մեզի ծանօթ վերջին դիմումը կը կրէ 1981 թուականը, որ Ազգային Առաջնորդարանի պաշտօնաթերթ *Պարբերաթերթ* հանդէսին մէջ տպագրուած փնտռտուքի յայտարարութիւն մըն է⁹:

Նամակագրական կապը աշխուժացած է մանաւանդ 1926-28ին, երբ սուրիական անապատին մէջ տիրող երաշտին հետեւանքով, արաբական բազմաթիւ ցեղախումբեր ապաստանած են Անտիոքի ու Ամըքի շրջանները, իսկ տեղւոյն հայերը շփուելով անոնցմէ շատերուն հետ, անոնց վրաններուն տակ յայտնաբերած են իսլամացած բազմաթիւ հայորդիներ, ապա՝ սփուրճահայ մամուլին մէջ, առ այդ տպագրած են

քանի մը լրատուութիւններ ու հրատարակած են գտնուած հայորդիներու ցուցակներ, որոնց յաջորդած է նամակներու եւ հարցումներու տարափ մը: Նոյն տարիներուն զուգահիսպած է նաեւ Արեւմտեան Հայաստանի մնացորդացին բռնագաղթը դէպի Սուրիա, երբ հազարաւոր հայեր Խարբերդէն, Բալուէն, Մալաթիայէն, Տիարպեքիրէն ու շրջակայ գաւառներէն անցած են Սուրիա¹⁰, բան մը որ շատերու մօտ վերաթարմացուցած է հարազատներ փնտոելու միտքը եւ նորանոր յոյսեր ներշնչած անոնց:

Մեր տեսած նամակներուն մեծ մասը գրուած է 1920-1930ականներուն: Մեծ է նաեւ թիւը յաջորդ տասնամեակի նամակներուն: Դիմումները նուազած են զգալիօրէն 1940ականներէն, մասամբ՝ Բ. Աշխարհամարտի հետեւանքով ստեղծուած նամակագրական դժուարութիւններուն, ապա՝ շատերու մօտ նկատուող յուսահատութեան պատճառով, ինչպէս նաեւ փնտոողներէն շատերուն հետզհետէ կեանքէ հեռանալուն եւ այլ ազդակներու հետեւանքով:

ԱՌԱՆՁԻՆ, ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ԴՐՈՒԱԳ-ՊԱՐԱԳԱՆԵՐ

Ամփոփ ձեւով ներկայացնենք քանի մը իրայատուկ դրուագներ, վերցուած՝ մեր տեսած նամակ-դիմումներէն, թէեւ համոզուած ենք որ կ'արժէ խօսիլ գրուած իրաքանչիւր դիմում-նամակի մասին առանձին-առանձին, առանց բացառութեան, որովհետեւ բոլորն ալ ողբերգական կեանքի մը, կեանքերու՝ պատմութիւններն են իրենց յոյզերով, յոյսերով, ուրախութիւններով եւ... յուսախաբութիւններով:

- Մեծ թիւ կազմած են անոնք, որոնք 1915ին անչափահաս ըլլալով, չեն իմացած իրենց անուն-ազգանունը եւ հետեւաբար չեն գիտցած թէ որո՞նց զաւակներն են իրենք, ո՞րտեղացի են ու հետեւաբար՝ ինչպէ՞ս պէտք է փնտոեն իրենց հարազատները:

- Հայուի մը, որ կը փնտոէր 1915ին ընդամէնը 4 տարեկան եղած իր եղբայրը, մատնանշած է՝ թէ եղբայրը վստահաբար չի յիշեր իր անուն-մականունը, եւ հետեւաբար զինք փնտոելու եւ գտնելու յոյսերը բացառուած են, բայց աւելցուցած է նաեւ՝ որ ան արտաքինով շատ նման էր իրեն, եւ առ այդ՝ նամակին կցած է իր լուսանկարը եւ խնդրած՝ որ Հալէպի ու շրջակայքին մէջ իրեն նմանող եւ համապատասխան տարիք ունեցող խարտեաշ պատանի մը գտնելու պարագային՝ իմացնեն իրեն¹¹:

- Ուրիշ մը, Թովմաս «Նալպանտեան», բնիկ տիարպեքիրցի, Աբխազիայէն, մանրամասն նկարագրած է Տիարպեքիրի իրենց տունը, թաղը, դրացիները ու խնդրած որ մարդիկ բարի ըլլան եւ ճշդեն իրեն անձանօթ իր իսկական մականունը, «որպէսզի ճիշդ ազգանունս իմանամ եւ գոնէ հարազատներից մէկը գտնեմ աշխարհում»¹²:

- Ռոտոսթոնցի Գալուստ Սահակեան, իր քոյրն ու քեռորդին գտնելու յոյսով, 1931ին գրած է Հալէպ, ուր ըսած է թէ իր քոյրը «իր ամուսինովը եւ

մէկ զաւակովը 1915ին արքայուած է Տէր Զօր, յետոյ ամուսինը ջարդը տարած են, մեր լսածին համաձայն քոյրս եւ զաւակը Տէր Զօրէն արաբ շէյխ մը տարած է, այս չափը ըսած են, շատ ու շատ կ'աղաչեմ որ նամակիս պատասխան գրելը չի յետաձգէք, որ աչքս ճամբան չի մնայ»¹³: «Աչքը ճամբան մնացած» Սահակեան, նոյն հարցով անգամ մը եւս դիմած է ճիշդ քառորդ դար անց՝ 1955ին: Իր այդ դիմումը եւս մնացած է անհետեանք¹⁴:

- Կին մը դիմած է Առաջնորդարան, անոր համար որ երագին մէջ երեք անգամ ըսուած է իրեն՝ թէ իր զաւակը ողջ է եւ յոյս յայտնուած թէ պիտի կարողանայ գտնել զայն¹⁵: Ուրիշներ իրենց հարազատներուն ողջ կամ մեռած ըլլալը ստուգելու համար յաճախ դիմած են գուշակներու, ու անոնց տուած դրական պատասխաններէն ետք լծուած զանոնք փնտռելու աշխատանքին եւ առ այդ գրած են Հալէպ:

- Հետաքրքրական է նաեւ 1958ին Իրաքէն յղուած արաբերէն նամակ մը, գրուած՝ Իրաքի Ալ Աշքայանի ցեղախումբի անդամներէն՝ Մահմուտ Իպրահիմ Իսհակ անուն անձի մը կողմէ, ուր ան հայոց մօտ կը փնտռէ իր հայրը՝ հայկական արմատներ ունեցող Իպրահիմ Իսհակը, որ 1934ին Իրաքի Թէլ Աֆար քաղաքէն մեկնած է անորոշ ուղութեամբ ու չէ վերադարձած¹⁶: Ըստ երեւոյթին, Յեղասպանութեան օրերուն, արաբներու մօտ ապաստանած, իսլամութիւն ընդունած ու յիշեալ ցեղախումբին մէջ ամուսնանալով ընտանիք կազմած հայ մըն է յիշեալ Իպրահիմ Իսհակը, որ աւելի ետք, լսելով իր ցեղին ձայնը, անցած է Հալէպ կամ այլուր, միացած ազգակիցներուն, իսկ իսլամ զաւակը, տարիներ ետք, իր հերթին, լծուած է կորսուած հայրը գտնելու աշխատանքին:

Կարելի է տալ բազմաթիւ այլ օրինակներ եւս, բայց ներկայացուածը բաւարար է պատկերացնելու համար վիշտը, հոգեկան դժուարին ապրումները, տառապանքն ու ցաւը, որ բաժինը եղաւ այն մարդոց՝ որոնք Յեղասպանութեան հետեանքով կորսնցնելով իրենց հարազատները, ամբողջ տասնամեակներ ապրեցան բարի լուրի մը, ուրախ խապրիկի մը կամ պատահական հանդիպումի մը երագով, ու անոնցմէ շատեր իրենց հետ գերեզման տարին այդ երագը, միաձուլուած՝ կորսուած զաւակի մը, հօր մը կամ մօր մը կորուստի անդարմանելի ցաւին:

Ստորեւ հրատարակութեան կու տանք նիւթին հայող քանի մը անտիպ նամակներ: Փոխած ենք միայն արեղեանական ուղղագրութեամբ գրուած նամակներուն ուղղագրութիւնը եւ անհրաժեշտութեան պարագային՝ կատարած ուղղագրական ու կէտադրական հպումներ:

Հրատարակուող նամակները կը պահուին Բերիոյ Հայոց Թեմի Դիանատան մէջ:

Ա.1

Դեկ. 1927-Յունուար 1928

Ռուսիա-Մայկոպ

Շնորհաւոր նոր տարի եւ բարի կաղանդ
Գերապատիւ Սրբազան հայր Տ. Արտուազղ Ծ. վարդապետ եւ
Առաջնորդ հայոց Հալապի

Հոգեւոր Ա. հայր,

Նուաստս Խարբերդ նահանգի շրջանից, Քէսրիկ գիւղի բնակիչներէն մին, Խոյուոր Օվանից Նաճար Ասատուրի որդին Յովհաննէս Նաճարեանցս, կը փնտռեմ իմ եղբոր որդին Անդրանիկը որ հիմա 16 տարեկան է, եւ քրոջս որդիները Կարապետ որ հիմա 18 տարեկան է եւ Սարգիսը 15 տարեկան է, որոնց հօր անունն է Պաղտասար եւ մօր անունը Աննա, թէպէտ ես ինքս Քէսրիկ ծնուած եւ Քէսրիկ գիւղիցն եմ, սակայն տաճիկների տուած նեղութեանց առթիւ Խօզաթ գիւղաքաղաքը փոխադրուեցանք, որպէսզի մի քիչ հանգիստ գտնենք, եօթն տարու չափ անդ մնալով դարձեալ վերադարձանք Բերդակ գիւղ Ա. Տնիկ թաղը, եւ այդ գիւղի ժողովուրդը մեզի անուանում էին Խօզաթցոնք, եւ այն տեղից երեք տարուց յետոյ Համաշխարհային Պատերազմն ծագեցաւ, տաճիկներն սկսեցին հայեր կոտորել, այդ առթիւ մեր Անդրանիկ անուն երախան ստիպուած մի ծանօթ թուրքի յանձնեցինք պահելու համար, եւ մենք խոյս տալով փախուստի դիմեցինք քրտերի մէջ ապաստանուեցանք միառժամանակ եւ այնտեղ լուր առնում էինք որ ամերիկացին եկած յետամնաց հայ որբ երախաները հաւաքած այդ կողմերը բերած են, մինչեւ ռուս զօրքի գալը եւ այդտեղից գնացինք Երզրնկան, Երզրնկայից գնացինք Կարին եւ Կարինից փախանք Ռուսաստան, եւ այդպիսով կորուսինք մեր հարազատներին, այն օրից ի վեր փնտռում եմ իմ կորուստներն եւ ոչ մի տեղեկութիւն չեմ ստացած, ուստի սոյն աղերսագրաւս դիմում եմ քեզ սրբազնութեանդ Ա. աջըն համբուրելով խնդրում եմ որ իմ խնդրանքն զանց չառնէք առանց մերժելու հայրախնամ օժանդակ աջակցութիւնդ ցոյց տալով զմեզ, անհունս պիտի ուրախացնէք, բարեացակամ շնորհիւդ երախտապարտ կացուցանելով զմեզ, տեղուիդ որբանոցներն դիմեցէք, Պաղտաստու սղասիոնին քովը միսի Ֆոլայէմբինի որբանոցը, տղան Միսակ էֆէնտուն¹⁷ հարցուցէք, Պէյրութ Ղազիր որբանոցը դիմեցէք, գուցէ այդ տեղերից որեւէ տեղեկութիւն կը ստանաք: Այդ կողմից մի տիկին եկաւ աստ, անձամբ գնացի նրա մօտ, վերոյիջեալ տեղեկութիւններն տալուց յետոյ ասաց որ բերդակցի Աղաւնի անուամբ մի տիկին թուրքի մի հետ մի առ ժամանակ կենակցելով ի վերջոյ առիթից օգտուելով իր երկու երախաներով փախեր եկել է կողմդ, նրան կանչիր հարցուփորձելով գուցէ որեւէ տեղեկութիւններ կը ստանաք մեր կորուստների առթիւ եւ մեզ կը տեղեկագրէք:

Խարբերդ Նահանգի շրջանից Բերդակ գիւղի բնակիչներէն մին, տակերմանճի¹⁸ Օվակիմին աղջիկը Խումարը, փնտռում է իր զաւակներին, աղջկան Աղանիին որ հիմա 28 տարեկան է, եւ տղան Դաւիթին որ հիմա 24 տարեկան է, եւ հայրերուն անունը Գասպար, եւ փնտռում է իր եղբորորդոյն Գարեգինին որ հիմա 18 տարեկան է, հայրին անունը Մինաս եւ մօր անունը Նազլի:

Խարբերդ Նահանգի շրջանից Ատիեաման գիւղաքաղաքից բնակիչներէն մին, Յակոբ Սամուրեանը փնտռում է իր զաւակները, մայրերուն անունը Մայրամ է, մեծ տղուն անունը Յակոբ է, որ հիմա 23 տարեկան է, իսկ փոքրին անունը Նազար է որ հիմա 18 տարեկան է, իսկ աղջկան անունը Թուրվանտա է որ հիմա 15 տարեկան է, եւ իր քրոջ որդին Սարգիսը որ հիմա 31 տարեկան է եւ հօրը անունը Յակոբ է եւ մօրը անունը Աննա է:

Խարբերդ Նահանգի շրջան Մազկերտ գիւղի բնակիչներէն մին Զարդար Նունովարդանեանը փնտռում է իր եղբօր որդիներուն Միհրանին որ հիմա 19 տարեկան է եւ աղջիկան անունը Աննա որ հիմա 24 տարեկան է, հայրերուն անունը Սարգիս է եւ մայրերուն անունը Սառա է:

Խարսա Նահանգից Պարեախտար գիւղի բնակիչ ազգայիններէն մին Վարսենիկը փնտռում է իր տղուն Յուլակին որ հիմա 21 տարեկան է, հայրին անունը Խաչատուր եւ ազգանունը Ալեքսանով:

Կը եզրակացնեն խօսքս չունենալով ուրիշ որեւէ հարկաւոր գրելիք: Մնամ երախտապարտ մինչ ցկեանս ձերդ խոնարհ ծառայ եւ սպասող գրուս փոխադարձ պատասխանին

Նաճարեան Յովհաննէս Ասատուրովիչ

Ա.2

Համար 7554

1 Մարտ 1928

Մեծայարգ

Տիար Նաճարեան Յովհաննէս Ասատուրովիչ

Maikope- (Russie)

Ստացած ենք Ձեր 1928 Յունուար մէկ թուակիր գրութիւնը որով տեղեկութիւն կը խնդրէիք Ձեր եղբօրորդոյն Անդրանիկի եւ Ձեր քրոջորդոյն Կարապետի ու Սարգիսի եւ այլ կարգ մը Քէտրիկցի, Բերդակցի, Ատիեամանցի եւ այլ ազգայնոց մասին:

Իբրեւ արդիւնք մեր կատարած պրպտումներուն, կը փութանք Ձեր սիրելութեան հաղորդելու որ.-

1- Խարբերդի եւ յարակից գիւղերու Հայրենակցական Միութեան վարչութիւնը 26 Փետրուար թուակիր պատասխանագրով մը կը հաղորդէ թէ Անդրանիկի ուր ըլլալը բոլորովին անյայտ կը մնայ, իսկ Կարապետի ու

Սարգիսի մասին տրուած տեղեկութեանց համաձայն, անոնցմէ մին թուրքերու ձեռամբ զարնուած իսկ միան ալ մեռած է բնական մահով:

2- Բերդակցի Տէյիւմէնճի Յովակիմին աղջկան Տիկ. Խումար Յարութիւնեանի աղջիկը Աղանին կը մնայ եղեր Խարբերդի Շուշազ իսկ տղան կը գտնուի եղեր Փինօլլի գիւղը: Ասկէ զատ Հալէպ կը մնայ յիշեալ տիկին Խումարի քոյրը եւ քոռորդին Լուտերը, որ կը ճանչցուի Առաքելեան ազգանունով: Տիկին Խումար յիշեալներու հետ կրնայ թղթակցիլ ուղղակի Առաջնորդարանիս հասցէով:

3- Ատիեամանցի Յակոբ Սամուրեան որ կը փնտոէր իր պարագաները, ներփակ կը յղենք Ատիեամանի Հայրենակցական Միութեան Հալէպի վարչութեան 29 Փետրուար թուակիր գրութիւնը, ուր հարկ եղած ծանօթութիւնները տրուած են իր կորուստներու մասին. հաճեցէք ներփակ նամակը յանձնել իր հասցէին:

4- Մազկերտցի Աննան, իր եղբօրը Միհրանին հետ, ներկայիս Մարսիլիա-Ֆրանսա կը գտնուի:

Մեր կատարած քննութեանց արդիւնքը յայտագրելով Ձեր սիրելութեան,

մնամ աղօթարար

Արտ. Վրդ.

Առաջնորդ Հայոց Հալէպի

Բ.1

Գոլումպոս Օհիօ

Նոյ. 28 1928

Գերապատիւ Տիար,

Տ. Արտաւազդ Ծ. Վ. Սիւրմէլեան

Յարգելի հայր իմ,

Թերթին մէջ կարդալով Ձեր կատարած մեծ պաշտօնը եւ որբերու ու որբուհիներու արաքներու եւ թուրքերու քովէն վերադառնալին լսեցի, շատ ուրախ եւ անհամբեր կ'զգամ ու կը ցափմ Հալէպէն հեռանալուս, ասկէ տասը տարի առաջ ես ալ Հալէպ էի, որ 6 վեց ամիսի չափ հայոց որբանոցը մնացի, բնիկ մարզուանցի եւ այդ տեղի եկեղեցականներէն լաւ ճանչցուած Վահրամ Եփրեմեանի քոյրն եմ, տարագրութեան միջոցին քաղաքէն ելլելով ընտանեօք մինչեւ Հեքիմ Խան հասանք, որ յաջորդ օրը Գանլը Տերէ ըսուած տեղը հասնելով քիւրտերը մեծ կոտորած մը ըրին մեր բանակին որ ես մեծ եղբօս հետ ազատեցայ, բայց մայրս զոհ տուի, իրեն հետ կար պզտիկ եղբայրս միայն չորս (4) տարեկան որ մեռած չէր, մեր թուրք պահապանները ըսին որ մանուկը ձիու վրայ հեծցուցած հետերնին տարին, հարկաւ այդչափ պզտիկ տղայ մը գտնելը շատ դժուար է, բայց նորէն յոյսս չեմ կոտորեր, որովհետեւ այն տեղերը շատ ալ հայ կիներ եւ աղջիկներ տարուած էին: Պատուելի հայր իմ, չեմ ուզեր իմ նամակովս ձեզ յուզել կամ ձանձրացնել, բայց կ'աղաչեմ միայն ինձի երկտողով մը իմացուցէք որ այդչափ հեռու տեղերաց ալ եկողներ կա՞ն¹⁹, նամակիս մէջ

պիտի գտնէք նկարս, որ տղեկը ճիշդ ինծի կը նմանէր, ոսկեգոյն մազերով բայց հաւանական շագանակագոյն դարձած է, աչքերը կապոյտ, պայծառ դէմքով, վզին վրան ալ ճիշդ դէմքին տակը վերքէ մնացած կտուկ մը նշան մը ունէր, անունը չիշեր, որ Յակոբ Եփրեմեան էր:



Կ'աղաչեմ այս տեսակ մէկը ըլլալէն կամ չըլլալէն ինծի իմացուցէք կամ այս նկարով նամակս պահեցէք կարելի է որ մը պէտք ըլլայ:

Աստուած հայ ազգիս ազատութիւն, սէր եւ միութիւն, եւ ձեզ պէս մեծ անձերուն ալ կարողութիւն ու համբերութիւն պարգեւէ:

Անկեղծ զաւակդ
Մարիամ Եփրեմեան

Մարիամ Եփրեմեան

86 Barthman Ave.
Columbus, Ohio

Բ.2

Համար 8727

25 Դեկտեմբեր 1928

Համեստուիի
Մարի Եփրեմեան
86 Barthman Ave.
Columbus, Ohio

Ձեր Նոյեմբեր 28 թուակիր նամակը ստացանք եւ համաձայն Ձեր խնդրանքին քննութիւն կատարել տուինք տեղոյս ազատագրեալներու մէջ, Ձեր եղբոր Յակոբի մասին որոշ տեղեկութիւն մը առնելու յոյսով:

Ազատագրուած որբերով շահաքրքրուող մարմինը մեզի կը հաղորդէ թէ իրենց միջոցներով ազատուած տղայոց մէջ այդ անունով մէկը չէ գտնուած:

Ձեր խնդրանքը միշտ նկատի պիտի ունենանք եւ եթէ յառաջիկային հնարաւոր ըլլայ,- ինչ որ չենք յուսար,- Ձեր եղբոր Յակոբի մասին նոր տեղեկութիւն մը առնել, Ձեզի կ'իմացնենք:

Հայրական սիրով եւ օրհնութեամբ
Մնամ աղօթարար

Առաջնորդ Հայոց Բերիոյ
Արտաւազդ Վրդ.

Պատուարժան
Թաղական Խորհուրդ
Ս. Եկեղեցույն-Հալէպի

Յարգելի Տեարք,

Տեղոյս ազգայիններէն այրի տիկին Զարուհի Ակնայ Կարմրակ գիւղէն Խաչատուր Ղազարեանի ընտանիք, Ակնայ քաղաքէն Տիար Ստեփան Մազմանեանի դուստրն է, որը ներկայիս կը բնակի հոս, իր ծնողաց մօտ:

Սոյն տիկին Զարուհի, իր հինգ զաւակներով վերջին սարսափելի պատերազմի տարագրեալն լինելով, իր 5 անչափահաս զաւակօք, մինչեւ Հալէպի մէջ կը հասնի, եւ սակայն իր զաւակներէն 2-3ը ճանապարհին անստաղութեամբ կը մնան, կ'անհետանան, եւ իր կարծիքով, երկու չափահասները ողջ լինել կը կարծէ:

Իր հինգ զաւակներու անուններն են՝

- 1- Նազենի, դուստր, որ ներկայիս 25 տարեկան է:
- 2- Սերոբ, մանչ, որ ներկայիս 23 տարեկան է:
- 3- Կարապետ, մանչ, որ ներկայիս 20 տարեկան է:
- 4- Խուտէմ, մանչ, որ ներկայիս 18 տարեկան է:
- 5- Յովակիմ, մանչ, որ ներկայիս 16 տարեկան է:

Տիկին Զարուհի Խաչատուր Ղազարեանի այս հինգ զաւակներէն մէկը, մանչ թէ աղջիկ անորոշ է, ներկայիս Հալէպ կը գտնուի եղեր, եւ, թէ՛ Ակըն եւ թէ՛ Կ. Պոլիս լուր առնելով, գրած տեղեկացուցած են հոս:

Արդ, ներկայիս ատելորդ չեմք համարիր, մանրամասնօրէն տեղեկացնելու թէ յիշեալ տիկին Զարուհին տարագրութեան սուկայի թուականներէն 1921ին իր ծննդավայրը դարձած է միայնակ, եւ 1925ին Պուլկարիոյ Ռուսճուր քաղաքս գտնուող տիար Ստեփան Մազմանեանի մօտ կը բնակի, որը եւ իր ծնողքն է:

Տիկին Զարուհի իր հինգ զաւակները տարագրութեան արհաւիրքներուն մէջ, մեծամեծ գուրգուրանքներէ յետոյ, անհետացած տեսնելով, խիստ տխուր ու անմխիթար, երբ ներկայ լուրը կ'առնէ իր մէկ կորսուած զակին ողջ եւ ուր մնալուն կը տեղեկանայ, սրտատրոփ կը սպասէ ակնդէտ, իր զակին գալստեան արժանանալու:

Եւ, միթէ չ'արժե՞ր որ, հոգեւոր հարք, արգոյ թաղական, աղքատախնամ, որբախնամ վարչութիւնք փոյթ տանին, սոյն մանչ թէ աղջիկ զակին հետքը գտնելու եւ որոշ ծանօթութիւն փութացնելու, ի մխիթարութիւն իւր անմխիթար այրիացեալ մօր, տիկին Զարուհիի:

Ներկայիս կը փութամ յայտնելու թէ այդ զաւակը, ըլլայ մանչ թէ աղջիկ, եթէ Ձեր ջանիք գտնուի ու այս կողմ դրկուելու վիճակի մնայ խնդիրը.-

Աւելորդ չենք համարիր յայտնելու որ, հոս, տիկին Զարուհիի ծնողքը, տիար Ստեփան Մազմանեան եւ իւր որդիքը, Գառնիկ, Դաւիթ եւ Յովհաննէս, ի վիճակի են զաւակը այս կողմ անցընելու օրինական միջոցները գործադրելու:

Ուստի, կը խնդրուի պատ. խորհուրդէդ, կամ պատկանեալ Որբախնամ վարչութենէն, որպէսզի բարի լինիք, նախ զաւակը գտնել եւ ըստ այնմ տեղեկագրել խորհրդոյս թէ՛

Ա. Ի՞նչ է անունը, եւ որո՞ւ մօտ կը գտնուի:

Բ. Այս կողմ դրկելու համար, ինչպիսի՞ օրինական գործողութեանց պէտք կայ Ձեր կողմէ, եւ որբին ծնողքին կողմէ:

Գ. Դրամական ինչպիսի՞ ծախսոց գումարի պէտքը անհրաժեշտ է, տեղեկացնել Թաղ. խորհրդոյն՝ ի գիտութիւն:

Քաջ վստահ լինելով որ, պիտի բարեհաճիք սոյն գրութեան իբր մխիթարիչ պատասխան փութացնել մեզ, կը մնամ աղօթարար վասն Ձեր

Գրիգոր քահանայ Գասպարեան
Աւագերէց Ս. Աստուածածին եկեղեցւոյ

Տիկին Զարուհիի հասցէն է հետեւեալը. Ստեփան Մազմանեան-Ռուսնուք-Պուլկարիա:

Գ.2

1931 Փետրուար 22
Ռուսնուք

Գերաշնորհ

Տ. Արտաւազդ Ծ. Վ. Սիրմէեան
Առաջնորդ հայոց Հալէպի

Գեր. Ս. հայր,

Կը յիշէք անշուշտ որ, տարի մը առաջ տեղւոյս ազգայիններէն մէկուն աղջկան փնտռտուքը կատարուեցաւ Ձեր միջոցաւ, եւ շատ գոհ եմք որ գտնուած է այդ աղջիկը, Մարիամը²⁰, որը ամուսնացեր է Պրն. Վահան Աւետիսեան խնուսցի, արհեստով շէօֆէոր[ի հետ], իսկ Մարիամը ակնցի, Խատմ գիւղի բնիկներէն է, եւ որուն մայրը տիկին Զարուհի Ղազարեան քաղաքս կը գտնուի:

Արդ, սոյն վերոյիշեալ ծանօթութիւնները տալով, ներկայիս կը խնդրուի Ձերդ սրբութենէն, որպէսզի բարեհաճէիք ներփակ գրութիւնը վերոյիշեալ Պրն. Վահանին, կամ տիկնոջը Մարիամին հասցնելու,- եւ

Լսելով որ բաւական թոգաթցիներ կը գտնուին եղեր հող, եթէ կարելի է զաղթականաց ցանկէն քաղուելով անունները դրկուի հոս, իրենց հայրենակիցներուն ներկայացնելու համար:

Մնամ 'ի համբոյր Ձեր օժեալ Ս. աջոյն
Գր. Քինյ. Գասպարեան
Աւագերէց Ս. Եկեղեցւոյ

Նամակին ծայրը Սիրմէեան Սրբազան մակագրած է հետեւեալը.
«Գոհացնել, յանձնել:
28 Փետրուար 931 Արտ. Եպսկ.»:

Նամակին դարձերեսին կայ վերոյիշեալ Վահան Աւետիսեանի հասցէն:

Դ.

Գեր. Տ. Զարեհ Ս. Եպս. Փայասլեան
Առաջնորդ հայոց Հալէպի թեմի
Հալէպ

Բնիկ Սեբաստիայի Զառա գիւղացի, ներկայիս 77 տարեկան եւ հայկական ընդհանուր տարագրութիւնից յետոյ Լենինականում հաստատուած էլճիկեան խաչիկ Նիկոլի փնտռում է իր

1 Իր կինը՝ Սեբաստիայի Գարապուլաղ գիւղացի Ճօմարտեան Արմաւենի Դանիէլի

2 Որդին Նիկոպապ էլճիկեան (1915 թուին 12 տարեկան)

3 Աղջիկը Ագապի էլճիկեան (1915 թուին 11 տարեկան)

4 Որդին Յովհաննէս էլճիկեան (1915 թուին 8 տարեկան)

5 Որդին Սոկրատ էլճիկեան (1915 թուին 6 տարեկան)

6 Որդին Արզուման էլճիկեան (1915 թուին 4 տարեկան)

7 Որդին Մեսրոպ էլճիկեան (1915 թուին 2 տարեկան)

8 Որդին Սերոբ էլճիկեան (1915 թուին 1/2 տարեկան)

Խնդրարկուի յայտարարութեան համաձայն, իր Էրզրումի շրջանում, թրքական բանակի մէջ զինձառայութեան միջոցին, ընտանիքը տարագրուել է Զառայից եւ ողջամբ հասել մինչեւ Տիվրիկ, որից յետոյ ոչ մի տեղեկութիւն հնարաւոր չի եղել ստանալ:

Մասնաւոր կերպով խնդրում եմ Հալէպի եւ Ամերիկայի Սեբաստիայի Վերաշինաց Միութիւնների միջոցով կատարել հարկ եղած փնտռութիւնները եւ ոգի ու կեանք շնորհել մի ծերունի աշխատաւոր հօր՝ որը իր մայր հայրենիքի խաղաղ կեանքը անց է կացնում իր հարազատների հոգեմորմոք յիշատակով:

Համբուրի Ս. աջոյդ եւ սպասելով Ձեր սրբազնութեան փրկարար կարգադրութեան, մնամ որդիական խորին ակնածանօք

17/5/1955 թ.

Յարութիւն Պալեան

Լենինական

Փնտռողի հասցէ.

Էլճիկեան խաչիկ Նիկոլի

Լենինական 15 փողոց, 231 տուն:

Ե.

Դեկ. 7 1958
Սոֆիա Պուլկարիա

Թաղական Խորհուրդ Հալէպի,
Մեծայարգ Տեարք,

Սոյն նամակը գրողը Ձեզ Պուլկարիոյ մէկ հայ քաղաքացին է որը կը բնակի Պուլկարիոյ մայրաքաղաքը՝ Սոֆիա, իմ անունս է Թագուհի Սուքիաս (հօր անունով) Սավայեան է: Ձեզմէ մեծ խնդրանք մը ունիմ այն է ինձ օգնէք որ կարենամ իմ կորսուած քոյրս գտնամ ու կարենամ անոր հետ կապ հաստատել: Քոյրս կորսնցուցած եմ հետեւեալ պարագաներու տակ. 1915ին քոյրս որուն անունը է Հաճի Մաննիկ Պօղոս Կակալըեան Ռոտոսթոյէն (Թեքիրտաղ) աքսորուած են դէպի Տէր Ջօրի կողմերը, 2-3 տարի վերջը, պատերազմի վերջաւորութեանը, աքսորեալներուն վերադարձի ժամանակ յիշեալ քոյրս մնացած է Հալէպ եւ ամուսնացած է արապի հետ, այս պարագան հաստատ ծանօթ է մեզի, բայց ես աւելի ուշ իմացայ այն պատճառաւ որ ես աքսոր չեմ գացած: Մօտ անցեալներս Ձեզ ուրիշ նամակ մըն ալ ուղղած եմ, միեւնոյն պարունակութեամբ, բայց դժբախտաբար մինչեւ հիմա ռեւէ տեղեկութիւն մը չունիմ ու չեմ գիտեր թէ նամակս իր նպատակին հասա՞ծ է կամ թէ ոչ, հետեւաբար խնդրեմ բարի եղէք ու այս նամակս անպատասխան մի ձգէք, նոյնիսկ եթէ Ձեզ ռեւէ դժուարութիւն չի պատճառեր նախ, փնտռելէ առաջ ինձ երկտողով մը իմացուցէք թէ նամակս ստացուած է ու թէ կը համաձայնիք Ձեզմէ կախեալը ընէք քոյրս գտնալու համար կամ ոչ:

Քոյրս հիմա մօտ 56-57 տարեկան կայ, բացի այդ Ձեզի կու տամ նոյնպէս եւ մանրամասնութիւններ Ռոտոսթօ (Թեքիրտաղի) քաղաք ապրած ժամանակ, այն նպատակով որ հոտ շատ հաւանական է Ռոտոսթոյէն հայեր գտնուին որոնք կրնան օգտակար ներկայանալ այս մեր պարագային: Քոյրս կը բնակէր Ռոտոսթոյի Սրբ. Թագաւոր թաղը, ժողովարանին դէմը, հօրը անունը էր Պօղոս Կակալըեան, որը հողագործութեամբ կը պարապէր:

Ես վստահ եմ որ Ձեզ ծանօթ է որքան մեծ ուրախութիւն պիտի ըլլայ ինձ համար եթէ կարենամ քոյրս գտնալ, այդ պատճառաւ անտարակոյս Ձեր մարդասիրութեան վրայ կասկած չունենալով վստահ եմ որ ինչ որ կախում ունի Ձեզմէ պիտի կատարէք: Այս առթիւ խնդրեմ ընդունեցէք իմ կանխաւ շնորհակալութիւններս ու երախտապարտութիւնս: Վերջին խնդրանքս է ինչպէս գրեցի աւելի վերը, իմացուցէք ինձ նամակս ստացած էք կամ ոչ ու ինչ նպատակ ունիք:

Հասցէս հետեւեալն է.

Takouhi Savaian, Rue Antim I, 22 Sofia, Bulgarie

Մնամ Ձերդ յարգանքով՝
Թ. Սավայեան

Զ.

Երեւան, 29 12 1959 թ.

Հալեպի հայոց առաջնորդին,
Յարգելի Սրբազան,

1915 թուի հայ աղէտի ժամանակ, աքսորվայրում, Ռակկայի կողմերը կորցրի քրոջս Ռեբեկային: Բնիկ պալըքեսիրցի, հօր անունը Սարգիս, մօր անունը Նարդուհի: Պաղտատից մեր մի հայրենակից գրում է որ նա Ռեբեկային տեսել է Սիրիայի Մէատին քաղաքում 1917 թուին, այդ ժամանակ Ռեբեկան ամուսնացած է եղել մի արաբ յիսնապետի հետ եւ ունեցել է երկու երեխաներ:

Մեծապէս խնդրում եմ Ձեզ, այս տուեալների հիման վրայ հնարաւորութիւն ունենայիք Տէր Զօրի առաջնորդի եւ կամ այլ միջոցներով փնտոել քրոջս եւ ինձ բարի լուր մը հաղորդել քրոջս վիճակի մասին: Ներկայումս քոյրս պիտի լինի մօտ 55 տարեկան:

Միեւնոյն ժամանակ կը խնդրէի այս մասին հաղորդէիք Հալեպում ապրող պալըքեսիրցիներին, որպէսզի նրանք եւս հետաքրքրուէին քրոջս բաղդովը:

Ձեր հոգատարութեան համար նախօրօք իմ խորին շնորհակալութիւնս եմ յայտնում Ձեզ:

Ռեբեկայի եղբայրը՝ Յարութիւն Սարգիսեան

Հասցէ. Հայկ. ՍՍՌ Երեւան, Ստալին Գրատեան փողոց, 48 տուն:

Նամակին կցուած է Ազգային Առաջնորդարանի դիւանապետ Սամուէլ Գայնաքեանին յղուած Սարգիս Ալեւանի երկտողը, ուր կ'իմացնէ թէ «Ծանօթ նամակը կը վերադարձնեմ ապարդիւն փնտոտութներէ վերջը: Հոս 3-4 պալըքեսիրցիներ միայն կան, որոնք ոչինչ գիտեն...»:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Կ. Պոլիս, 41.5x57.5 սմ.: Լոյս տեսած է 28 թիւ, կամ՝ աւելի:

² [Աղեքսանդրիա], տպագրութիւն-հրատարակութիւն Արամ Ստեփանեանի, 1916, 24 էջ:

³ Գուժկան Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկեան), *Եղեռնապարտում Փոքուն Հայոց եւ Նորին Մեծի Մայրաքաղաքին Սեբաստիոյ*, Պոսթըն, Տպ. «Հայրենիք», Հրատ. Ամերիկայի «Սեբաստիոյ Վերաշինութեան Միութեան», 1924, էջ 543:

⁴ Հայաստանի Ազգային Արխիւ, ֆոնտ 420, ցուցակ 65, համարեա բոլոր գործերը:

⁵ Այս բոլորը, համապատասխան ուսումնասիրութեամբ եւ ծանօթագրութիւններով ճոխացուած, կը յուսանք հրատարակութեան տալ ոչ հեռու ապագային:

⁶ Դիւան Բերիոյ Հայոց (ԴԲՀ), Մկրտիչ Մարգարեանէն Արտաազդ Ծ. Վրդ. Սիրմէեանին, 20 Յունուար 1926, Լանսէէն (Իզէր-Ֆրանսա):

-
- ⁷ ԴԲՀ, Յովհաննէս Նաճարեան Ասատուրովիչէն Հալէպի Առաջնորդին, Մայկորէն (Ռուսիա): Անթուակիր, հաւանաբար 1927:
- ⁸ ԴԲՀ, Համբարձում Միհրանեանէն առ «Յարգելի տեարք», 26 Ապրիլ 1928, Լենինականէն:
- ⁹ «Կը փնտոեն», տե՛ս՝ *Պարբերաթերթ*, Հալէպ, Դ. Տարի, թիւ 1 (10), Յունուար-Մարտ 1981, էջ 95:
- ¹⁰ **Մ.Խ.**- Այս մասին կարդալ այս հատորին մէջ Վահէ Թաշճեանի եւ Անի Ֆիշենկճեանի յօդուածները:
- ¹¹ Տե՛ս՝ աստ, նամակ թիւ Բ.:
- ¹² ԴԲՀ, Թովմաս Նալպանտեանէն առ «Մեծայարգոյ եւ Սրբազան Տեարք», Աբխազիայէն (Խորհրդային Միութիւն), 23 Օգոստոս 1967:
- ¹³ ԴԲՀ, Գալուստ Սահակեանէն առ «Պատուարժան հոգաբարձութիւն Հալէպի հայոց», 17 Մայիս 1931, Worcester Mass.էն:
- ¹⁴ ԴԲՀ, Գալուստ Սահակեանէն Հալէպի Առաջնորդին, 24 Մարտ 1955, Worcester Mass.էն:
- ¹⁵ ԴԲՀ, Զուարթ Աբրահամեանէն՝ Հալէպի Առաջնորդին, 21 Յուլիս 1929, Եգիպտոսէն:
- ¹⁶ ԴԲՀ, Մահմուտ Իպրահիմ Իսհակէն Հալէպի Հայոց Առաջնորդին, 7 Ապրիլ 1958, Թէլ Աֆարէն (Մուսուլ-Իրաք, արաբերէն լեզուով):
- ¹⁷ Նկատի ունի ծանօթ հայասեր դանիացի Քարէն Եփփէն ու անոր որդեգիր զաւակը՝ Միսաք Մելքոնեանը: Միս Եփփէի որբանոցը կը գտնուէր Հալէպի Պաղտատի Կայարանին մօտակայքը, Շէյխ Թահա թաղամասին մէջ:
- ¹⁸ Թրքերէն՝ ջաղացպան:
- ¹⁹ Նկատի ունի նոյն շրջանին կազմակերպուած ձեռով անապատներէն հայ խլեակներու հաւաքման աշխատանքը, որուն համար ստեղծուած էր առանձին մարմին մը՝ «Որբահաւաք Յանձնախումբ»ը, առաջնորդ Արտաւազդ Արք. Սիլվէեանի նախագահութեամբ: Նամակագիրը այդ Յանձնախումբի գործունէութեան մասին թերթերու մէջ կարդացած ըլլալը կը յայտնէր վերեւ:
- ²⁰ Խնդրարկու Զարուհի Ղազարեանի վերեւ տրուած զաւակներու ցուցակին մէջ Մարիամ անունով դուստր չէ նշուած, այլ կայ մէկ աղջիկ միայն՝ Նազենի:

**The Soul Searching Process throughout Syria for Those
Lost During the Armenian Genocide**
(Summary)

Mihran Minassian
mihran.min@gmail.com

A search operation started as soon as the survivors of the Armenian Genocide had arrived at their new stations. They started to ask questions and inquire about their family members, relatives, and co-villagers. Diverse means were used in this search operation: announcements with the heading “looking for” were printed in newspapers, letters were sent to different addresses, survivors were interrogated, some even returned to Aleppo and the Syrian deserts to conduct searches for their lost ones.

Aleppo, as the main center of refugee settlement and as the first station on the road to the Syrian deserts, was the point of convergence for all the attention of those looking for surviving relatives. From all over the world Armenians sent inquiries to the Aleppo Prelacy, diverse compatriotic unions and individuals, always expecting “good news” for recovery of kin.

The immense number of inquiries induced the Prelacy to adopt a special search system. Every inquiry was processed by designated personnel; the content of the letter was summarized and immediately communicated to assigned individuals.

Alongside query letters addressed to the Prelacy, announcements were often made from the altar of the church by clerics and posted on the walls of the church and other public places. The information gathered was combined and sent to the inquirer.

Notwithstanding this extensive and systematic effort, very few were able to find their relatives as most had perished and details of their deaths were unknown.